ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Դիտարկումներ
ստ. 24.09.21թ

№ 1/10.4.4/11577
«_____» «_____» 2021 թ.

Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար- գլխավոր քարտուղար
պարոն Վ. Նարիբեկյանին

Հարգելի պարոն Նարիբեկյան

Ի կատարումն վարչապետի 2021թ. սեպտեմբերի 22-ի N02/05.1/31359 հանձնարարականի՝ ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N240-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի կողմից Կառավարությանը ներկայացված հարցերի պարզաբանումները:

Հարց N1՝ Արդյո՞ք ջրավազանային կառավարման պլանի փոփոխմամբ հաշվի է առնվել հասարակական և պետական շահը (Ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ պարբերության 3-րդ կետ): Եթե այո, ապա խնդրում ենք կցել գործողությունը հիմնավորող փաստաթղթերը:

Այո, հաշվի է առնվել: ՀՀ ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի համաձայն՝ հասարակական շահ է համարվում՝ ջրային հարաբերություններում այնպիսի գործողություն, ինչի հիմնական նպատակն է օգտակար լինել հասարակությանը: Օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքներից են՝ օգտագործելի ջրային ռեսուրսների մատչելիության արդարացի սկզբունքների խթանումը, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը՝ ի շահ հասարակությանը: Օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի նպատակներից մեկն է օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովումը: Օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ ջրավազանային կառավարման պլանավորման միջոցով հավասարակշռվում են ջրօգտագործողների, ներառյալ՝ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները:

Նախագծի նպատակներից է կարգավորել Ախուրյանի գետավազանում բավարար ջրաքանակի բացակայության, ջրի ոչ ճիշտ և անհավասարաչափ բաշխման պատճառով, Ախուրյանի գետավազանի «Կասկադ», «Փարոս», «Ամասիա», «Ջրաձոր»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
հեռ. +374 11 818 501 | ֆաքս՝ +374 11 818 506

փիէկերի միջև առաջացած ջրօգտագործման ռեժիմի խնդիրները և հավասարակշռել ջրի բաշխումը փիէկերի միջև, ինչի մասին հարուցված քրեական գործի շրջանակներում, փաստում է ՀՀ գլխավոր դատախազությունը (գրության պատճենը կցվում է): Ախուրյանի գետավազանում «Կասկադ», «Փարոս», «Ամասիա», «Ջրաձոր» փիէկերի ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրաքանակի և տարեկան արտադրված էլեկտրաէներգիա հիման վրա հաշվարկված փաստացի ջրառի վերլուծությունը (կցվում է) ցույց է տալիս, որ փիէկերի միջև ջուրը ոչ հավասարաչափ է բաշխված, ինչի արդյունքում առկա է շահերի բախում:

Գետավազանի «Կասկադ», «Փարոս», «Ամասիա», «Ջրաձոր» փիէկերի հավասար պայմաններում բնականոն գործունեության և ոռոգման ջրապահանջի բավարարման արդյունքում հասարակության համար կստեղծվեն առավել օգուտներ (նոր աշխատատեղեր, հարկային մուտքեր, բոլոր փիէկերի կողմից սահմանված ռեժիմներով կարտադրվի էլեկտրաէներգիա) և կկարգավորվի փիէկերի միջև առկա վեճը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքում և շրջակա միջավայրի նախարարությունում առկա տեղեկատվության համաձայն, Ախուրյանի գետավազանի «Կասկադ», «Փարոս», «Ամասիա», «Ջրաձոր» փիէկերի հզորությունները կազմում են՝

1. «Անի» ԲԲԸ-ի «Ջրաձոր» փիէկ՝ 5930 կՎտ,
2. «Ֆենհալ» ՍՊԸ-ի «Կասկադ» փիէկ՝ 4437 կՎտ,
3. «Լայթէկո» ՍՊԸ-ի «Փարոս» փիէկ՝ 2383 կՎտ,
4. «ԷՊԷՖ» ՍՊԸ-ի «Ամասիա» փիէկ՝ 1600 կՎտ:

Փիէկերի հզորությունների հաշվարկը ցույց է տալիս, որ 3 փիէկի («Կասկադ» փիէկ, «Փարոս» փիէկ, «Ամասիա» փիէկ) հզորությունները միասին ավելի մեծ են, քան «Ջրաձոր» փիէկինը:

Վերլուծելով փիէկերի հզորությունները՝ ակնհայտ է, որ 3 փիէկը («Կասկադ» փիէկ, «Փարոս» փիէկ, «Ամասիա» փիէկ) միասին ավելի շատ էլեկտրաէներգիա կարող են արտադրել, քան «Ջրաձոր» փիէկը:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ պարբերության 3-րդ կետին, ապա այդ ընթացակարգը սահմանված է նոր ջրօգտագործման թույլտվություն տրամադրելու դեպքում ջրօգտագործման թույլտվության ստացման հայտի գնահատմանը, ինչը տվյալ պարագայում կիրառելի չէ, սակայն հարկ է նշել, որ է 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N 240-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության N 1347-Ն որոշման կարգավորումը համահունչ է Ձեր մատնանշված հոդվածում ամրագրված սկզբունքներին:

Հարց N2՝ Արդյո՞ք ջրավազանային կառավարման պլանի փոփոխման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեներում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանք կազմվել է: Եթե այո, ապա խնդրում ենք կցել տեղեկանքը և դրա հիմքում առկա հաշվարկները կամ այլ փաստաթղթերը:

Այո, կազմվել է և կից ներկայացվում է, ինչպես նաև հասանելի է https://www.e-gov.am/sessions/ հղումով:

Հիմնավորման 6-րդ կետում նշված է.
« 6.Տեղեկատվություն լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

Նախագծի ընդունումից և մասնավորապես նախագծի 1-ին կետի 8-րդ ենթակետով սահմանվող դրույթն ուժի մեջ մտելուց հետո՝ համաձայն Օրենսգրքի 33-րդ հոդվածի և Ախուրյան գետավազանի «Կասկադ», «Փարոս», «Ամասիա», «Ջրաձոր» փհէկերի ջրօգտագործման ռեժիմի և բավարար քանակությամբ ջրի ապահովման խնդիրները լուծելու նպատակով, կվերանայվեն Ախուրյանի գետավազանում տրված ջրօգտագործման թույլտվությունների պայմանները: Արդյունքում գետավազանում գործող փհէկերից մեկը չի կարողանա ջրառ (ոռոգման սեզոնին) կատարել Ախուրյան գետից սնվող աջափնյա ջրանցքից և հետևաբար կարող են նվազել ՀՀ պետական բյուջեի մուտքերը, սակայն մնացած փհէկերի բնականոն գործունեության արդյունքում կարող են ավելանալ այդ ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող գումարները: »

Հարկ է նշել, որ շրջակա միջավայրի նախարարությանն ուղղված գրություններում «Անի» ԲԲԸ-ի տնօրենի պնդմամբ՝ «Անի» ԲԲԸ-ն ստեղծել է 30 աշխատատեղ, տարեկան արտադրում է 23-30 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա՝ պետությանը վճարելով շուրջ 260 միլիոն ՀՀ դրամի չափով հարկեր և տուրքեր, սակայն չի մասնավորեցնում արդյո՞ք նշվածը վերաբերում է «Անի» ԲԲԸ-ի միայն «Ջրաձոր» փհէկին:

Հզորությունների վերլուծության արդյունքում, ինչի մասին նշված է «Հարց N1» մասում ակնհայտ է, որ 3 փհէկի («Կասկադ» փհէկ, «Փարոս» փհէկ, «Ամասիա» փհէկ) աշխատանքի արդյունքում կարող է ավելի շատ էլեկտրաէներգիա արտադրվել և ստեղծվել ավելի շատ աշխատատեղեր, քան միայն «Ջրաձոր» փհէկը, հետևաբար պետական բյուջեում կմուտքագրվի ավելի շատ գումար:

Հարց N3՝ Արդյո՞ք ջրավազանային կառավարման պլանի փոփոխմամբ հաշվի են առնվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պետական օժանդակության արգելքին վերաբերող պայմանները:

Կից ներկայացնում եմ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից շրջակա միջավայրի նախարարությանը տրամադրված՝ 2021թ. օգոստոսի 31-ի «Շրջակա միջավայրի նախարարության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին» N229-Ա որոշումը, որտեղ հստակ նշված է, որ ջրավազանային կառավարման պլանի փոփոխությամբ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտում չի հայտնաբերվել:

Հարց N4՝ Վերջապես արդյո՞ք այդ փոփոխությամբ հաշվի են առնվել պետության կողմից որդեգրված Հայաստանի էներգետիկայի զարգացման ռազմավարության սկզբունքները:

Կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրով (մինչև 2040 թվականը) վերականգնվող էներգետիկայի հիմնական առաջնահերթություններից է հանդիսանում վերականգնվող էներգետիկայի

ներուժի առավելագույն օգտագործումը: Նկատի ունենալով տեղական ռեսուրսները և տեխնոլոգիայի զարգացման միտումները՝ արևային կայանների կառուցումը գերակա է մնացած տեսակների նկատմամբ՝ հաշվի առնելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշներով պայմանավորված սահմանափակումները:

Կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշման N1 հավելվածի 6-րդ էջի «III. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» մասում նշված է, որ այս պահին կառուցման փուլում են գտնվում Փոքր ՀԷԿ-եր՝ 23 կայան, 50 ՄՎտ, թողարկումը մինչև 2023թ. ներառյալ (60 մլն դոլար ներդրում), իսկ N2 հավելվածի 1.12 կետում նշված է «Փոքր ՀԷԿ-երի կառուցում՝ ընդհանուր դրվածքային հզորությունը 380 ՄՎտ-ից հասցնելով 430 ՄՎտ » :

Կից ներկայացնում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գրության պատճենը:

Միաժամանակ հարկ եմ համարում տեղեկացնել, որ 2021 թվականի օգոստոսի 18-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N 240-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության N 1347-Ն որոշումը:

Առդիր՝ 1 խտանիշք:

Հարգանքով՝

Ռ. Պետրոսյան

X

Ջրային ռեսուրսների կառավարման վարչության ջրավազանային
պլանավորման կառավարման բաժին Նազիկ Ջզմաչյան
(011) 818545